



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- սեպտեմբերի 2018 թվականի №
ք. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով,

- ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հասցեագրված քաղաքացի Իվետա Մուրադյանի (այսուհետ՝ դիմումատու) 2018 թվականի հունիսի 6-ի դիմումը, իրեն սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Ն. Զարյան փողոցի 74 բազմաբնակարան շենքի 265/4 բնակարանի սպառման համակարգն (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացման 2018 թվականի փետրվարի 22-ի դիմումն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից անպատասխան թողնելու վերաբերյալ,
- բ) Ընկերության 2018 թվականի հուլիսի 10-ի գրությունը՝ 2018 թվականի հունիսի 20-ին դիմումատուի հետ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու և վերջինիցս 138 000 ՀՀ դրամ միացման վճար գանձելու վերաբերյալ,
- գ) որ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ 2018 թվականի հուլիսի 24-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ վերջինիս կողմից Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 2.3 և 13.1 կետերով սահմանված կարգի խախտման փաստի ուսումնասիրության

նպատակով: Լրացուցիչ հանգամանքների ուսումնասիրության նպատակով վարչական վարույթի ժամկետը երկու անգամ 10-ական օրով երկարաձգվել է,

- դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության 2018 թվականի օգոստոսի 6-ի №04-ՂԳ-780 գրությամբ ներկայացված պարզաբանումները, համաձայն որոնց՝ դիմումատուի հետ կնքվել է միացման պայմանագիր, որով միացման վճարի հաշվարկման համար հիմք է հանդիսացել Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի №659Ն որոշումը: Ընկերությունը նշել է, որ հիշյալ որոշմամբ այլ կարգավորումներ նախատեսված չեն, որոնք կհամապատասխանեին առկա իրավիճակում միացման վճարի չափի որոշման հարցին, և հաշվի առնելով Ընկերության և դիմումատուի միջև միացման ծառայությունների շրջանակում ձևավորված հարաբերությունների քաղաքացիաիրավական բնույթը, Ընկերությունն առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածով: Ընկերությունը հայտնել է նաև, որ տվյալ պարագայում խոսքը վերաբերում է ոչ թե բազմաբնակարան շենքի սպառման համակարգի միացմանը, այլ արդեն իսկ շահագործման հանձնված բազմաբնակարան շենքում առանձնացված և սեփականության իրավունքով բնակիչներին պատկանող բնակարաններն էլեկտրամատակարարմամբ ապահովմանը,
- ե) Երևան քաղաքի Ն. Զարյան փողոցի 74 բազմաբնակարան շենքի 265/4 բնակարանի սպառման համակարգի միացման վերաբերյալ Հանձնաժողովի անհատական որոշման բացակայությունը,
- զ) Կանոնների 2.3 կետը, համաձայն որի՝ չի թույլատրվում սպառողներից կամ էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձանցից պահանջել կատարել վճարներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրանց ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով,
- է) Կանոնների 13.8 կետը, համաձայն որի՝ Հանձնաժողովը, նոր սպառողի և մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով՝ առանձին դեպքերում մատակարարի կամ դիմող անձի դիմումի (կից հիմնավորումներով) հիման վրա,

մատակարարի և դիմող անձի համաձայնության դեպքում կարող է ընդունել էլեկտրական ցանցին միացման անհատական որոշումներ,

ը) Կանոնների 75-րդ կետը, համաձայն որի՝ մատակարարը սպառողի կամ դիմող անձի դիմումին պարտավոր է պատասխանել այն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե առանձին դեպքերի համար Կանոններով այլ ժամկետ սահմանված չէ,

թ) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը Կանոնների 13.8-րդ կետով նախատեսված Հանձնաժողովի կողմից անհատական որոշում կայացնելու անհրաժեշտության դեպքում, առանց Հանձնաժողովի անհատական որոշման, դիմումատուի բնակարանի սպառման համակարգը միացրել է էլեկտրական ցանցին՝ դիմումատուից պահանջելով միացման վճար, որը չի համապատասխանում Կանոնների 2.3-րդ կետի պահանջներին, քանի որ նման պահանջի իրավունք տվյալ դեպքի համար ամրագրված չէ ոչ Կանոններով, ոչ պայմանագրով և ոչ էլ այլ իրավական ակտերով: Անդրադառնալով վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացրած պարզաբանումներին՝ հարկ է փաստել, որ ամբողջությամբ կարգավորման դաշտում գործող Ընկերությունը, ընդհանուր կարգավորումներից շեղվող առանձնահատուկ դեպքերում, այն պարագայում, երբ օրենսդրությամբ սահմանված է նման դեպքերի կարգավորման նպատակով Հանձնաժողովի կողմից անհատական որոշման կայացման վերաբերյալ նորմ, չպետք է իրեն իրավունք վերապահեր կիրառելու անալոգիայի սկզբունքը: Վարչական վարույթի շրջանակում փաստվել է նաև, որ Ընկերությունը Կանոնների 75-րդ կետով սահմանված ժամկետում չի պատասխանել դիմումատուի դիմումին,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Ընկերությանը նախազգուշացնել՝ Կանոնների 2.3 և 75-րդ կետերի խախտման համար:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սահմանել որ՝

- 1) Շենքում բնակարանների վերակառուցման արդյունքում՝ շենքի միացման վճարի հաշվարկում ներառված բնակարանների կամ 0,22 կՎ լարման այլ սպառման համակարգերի քանակի փոփոխության դեպքում նոր բնակարանները և այլ սպառման համակարգերն 0.22 կՎ լարման էլեկտրական ցանցին միացման նպատակով նախաձեռնող անձը (բնակիչը) դիմում է Ընկերություն՝ կից ներկայացնելով Կանոնների 13.2 կետով սահմանված՝ սպառման համակարգը 0.22 կՎ լարման էլեկտրական ցանցին միացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և վճարում միացման վճար՝ 10 կՎԱ հզորությամբ միացման դեպքում՝ 138 000 ՀՀ դրամի և 14 կՎԱ հզորությամբ միացման դեպքում 204 000 ՀՀ դրամի չափով.
- 2) սույն կետի 1-ին ենթակետում նշված դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը Լիազորված անձին ներկայացնում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ նրան տրամադրելով իր կողմից ստորագրված Պայմանագիրը՝ 2 օրինակից.
- 3) չի թույլատրվում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձանցից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրանց ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, սույն որոշմամբ, էլեկտրամատակարարման պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

